



# ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

ARCHBISHOP TORKOM MANOOGIAN, PRIMATE

## ՝՝ԱՆՄԱՀ Է ՄԱԿԱՐ ԵԿՄԱԼԵԱՆ՝՝

Մեզի համար հոգեկան մեծ ուրախութիւն է տեղեկանալ որ նիւ ձըրզիի մեր չորս Եկեղեցիներու, ֆէրլոնի Սրբոց Ղեւոնդեանց, Թէնէֆլայի Ս. Թովմաս, Լիվինկսթընի Ս. Աստուածածին եւ Եոլնիըն Սիթիի Ս. Խաչ, Դպրաց Դասերը միասնաբար կազմած են յատուկ յայտագիր մը՝ նշելու համար Մակար Եկմալեանի ծընընդեան 125-ամեակը:

Մեծապէս գնահատելի եւ օրինակելի նախածեոնութիւն մըն է այս հանդիսութիւնը, որ նպատակ ունի Մակար Եկմալեանի անձն ու գործը ծանօթացնել եւ անոր հեղինակութիւնները հրամցնել ներկայ հասարակութեան:

Մակար Եկմալեան, որ եղած է երգահան, խմբավար եւ դաստիարակ, մեր ժողովուրդի լայն խաւին ծանօթ է մասնաւորաբար իր մշակած ՊԱՏԱՐԱԳով, որ ամէն Կիրակի աշխարհի զրեթէ բոլոր Հայ Եկեղեցիներուն մէջ հայ հաւատացեալներու հոգիները կը յուզէ, կը վերացնէ եւ մեր Տիրոջ ՝՝ներկայութեամբ՝՝ կը խանդավառէ:

Եկմալեանի մշակած Պատարագի մասին անոր աշակերտ Կոմիտաս Վարդապետ հետեւեալ վկայութիւնը կու տայ. ՝՝Յարգելի երաժիշտ Պր. Մակար Եկմալեան մեր երգեցողութեան ամայի անդաստանին մէջ ներդաշնակութեան անդրանիկ բուրաստանը տնկեց: Սրտանց ուրախ ենք, որ հայերս այժմ կարող ենք պարծել, թէ մենք ալ ետ չենք մնացած վսեմ գեղարուեստի ու կատարելագոյն երաժշտութեան զարգացումէն...՝՝:

Մակար Եկմալեան հոգեւոր երգերու հեղինակումներէն զատ մշակած է նաեւ աշուղական, ժողովրդական եւ քնարական երգեր, որոնք եւս գեղարուեստական մնայուն արժէք կը ներկայացնեն, եւ համաձայն քննադատներու՝ հայ երաժշտութեան մակարդակի բարձրացման նպաստած են ու կարեւոր դեր ունեցած ազգային յօրինողական իւրայատուկ դպրոցի ձեւաւորման աշխատանքներուն մէջ:

Այստեղ կը մէջբերենք Ռոմանոս Մելիքեանի հետեւեալ գնահատականը. ``Անմահ է Մակար Շկմալեան, ինչպէս անմահ յաւիտեանական է գեղեցիկը միայն:``

Մեր մաղթանքն է որ մեր Դպրաց դասերը միշտ ձգտին գեղեցիկին ու կատարեալին, եւ մեր հոգեւոր ու հոգեբուխ երգերն ու մեղեդիները կատարողական բարձր մակարդակով հրամցնեն ունկընդիր հասարակութեան:

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Դեկտեմբեր 21, 1981  
Նիւ Եորք, Ն.Ե.

From the desk of

Յունիս 17, 1981



Mirjan Kirian

Գերշ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան  
Բարեխնամ Առաջնորդ Հիւս. Ամերիկայի  
Արեւելեան Թեմի  
Նիւ Եորք

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Հաճոյքն ունինք պաշտօնապէս հաստատելու թէ ՄԱԿԱՐ ԵՎՄԱԼԵԱՆԻ ծննդեան 125րդ տարելիցին նուիրուած հանդիսութիւնը տեղի պիտի ունենայ Կիրակի, Յունուար 17, 1982ին, յ.մ.ժամը Յին՝ Սբց. Ղեւոնդեանց Հայց. Եկեղեցւոյ նորակերտ հանդիսասրահին մէջ, ի ֆերլօն, մասնակցութեամբ նիւ ճրրգիի չորս քոյր եկեղեցիներու դպրաց դասերուն եւ բարձր հովանաւորութեամբ Ձերդ Սրբազնութեան:

Ներփակ Ձեզի կը դրկենք մեր Մարտ 16, 1981 շրջաբերական նամակին պատճէնը: Այդ թուականէն ի վեր երեք յանձնախմբային ժողովներ ունեցանք եւ մէկ ընդհանուր փորձ, որուն մասնակցեցան 40 անդամներ՝ չորս քոյր եկեղեցիներէ:

Այժմ պատրաստութեան մէջ է յոբելիարին կեանքին ու գործին նուիրուած 16 էջնոց գրքոյկ մը, եւ աւելի վերջ պիտի պատրաստուի յայտագրին գրքոյկը:

Նիւ ճրրգիի դպրաց դասերուն մէջ մեծ աշխոյժ ու խանդավառութիւն ստեղծած է այս հանդիսութեան կազմակերպումի գործը: Նաեւ ատիկա բացառիկ առիթ մը կը պարգեւէ քոյր եկեղեցիներու մէջ ամէն Կիրակի երգող հաւատարիմ դպիրներու իրարու ծանօթացման եւ ապագային իրարու հետ համագործակցութեան կարելիութեան:


Կը խնդրենք որ բարի ըլլաք մեզի դրկելու քանի մը տող այս առթիւ նուիրուած Ձեր կողմէ եկմալեանին:

Խորին յարգանքով՝

*Միրճան Գիրեան*  
Միրճան Գիրեան, ատենակետ

585 Saddle River Rd., Saddle Brook, N.J. 07662. Phone: (201) 797-7600 (Office)

16-31 Eberlin Dr., Fair Lawn, N.J. 07410. Phone: (201) 791-5886.



ՍՐԲՈՑ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ  
Տէր Բարի Բհնյ. Մէթճեան, Հովիւ

ST. LEON ARMENIAN CHURCH  
Rev. Patee Metjian, Pastor

March 16, 1981

New Jersey Armenian Church Pastors  
Church Choir Chairmen  
Church Organists  
Church Choir Masters

Dear Friends:

You all are very familiar with Makar Ekmalian's Badarak, since we all sing it in our churches each and every Sunday.

This year is the 125th anniversary of the birth of this great composer, who is best known for his modern Armenian religious music. But for his religious compositions, we are limited in our knowledge of his entire musical talent.

In order to commemorate his anniversary with due respect and present a successful program to the N.J. Armenian community, we are taking this initiative to invite you to a meeting on TUESDAY, March 24, 1981, 8 P.M. at St. Leon Armenian Church, the address of which is printed below, for the purpose of forming a Commemorative Committee and starting to organize the whole program.

At this point we wish to inform you that His Eminence Archbishop Torkom Manoogian, the Primate, has shown interest in this program and will participate personally, and also will preside over the presentation. The whole program will be under the auspices of the Diocese of the Armenian Church of America.

We will appreciate if you make every effort to send at least 4 representatives to this meeting where the idea of commemorating Ekmalian's 125th anniversary will be discussed and action will be taken to honor one of our most talented composers this year.

Hoping to receive your favorable response,

  
Shavarsh Torosian, Deacon

Sincerely yours  
  
Mirian Kirian